# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

## ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/102 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «23» Սեպտեմբերի 2019թ.

2019թ-ի սեպտեմբերի 23-ին, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/102 ծածկագրով / յուղերի, քսայուղերի և հակասառիչ հեղուկի ձեռքբերման/ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) արտահերթ նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

| | |
|---|---|
| Ա. Գևորգյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի տեխնիկական տնօրեն. |
| Ս. Չիդեմյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ԿՏԱ-ի պետ. |
| Ա. Ղոսալմյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի էլեկտրական արտադրամասի պետ. |
| Տ. Ղևոնդյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Ջ և ՀՄԱ-ի պետ. |
| Հ. Մելքոնյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ԿՆԱ-ի պետ. |
| Գ. Եսայան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ավտոտնտեսության պետ. |
| Լ. Օհանյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահական ծառայությունների ավագ հաշվապահ. |
| Ա. Պետրոսյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով՝. |

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Տիրան Լաճիկյանը «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գնումների մասնագետ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է ինը անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի ութ անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին ենթակետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Գևորգյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

## ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/102 ծածկագրով գնման ընթացակարգի վեցերորդ չափաբաժնի մասով երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացնելու ծանուցման մասին:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

### 1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/102 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՉԱՓԱԲԱԺՆԻ ՄԱՍՈՎ ԵՐԿՐՈՐԴ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՀԻՄՆԱՎՈՐՈՂ՝ ՀՐԱՎԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն արձանագրեց, որ ս/թ. օգոստոսի 30–ին ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/102 ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնով ընտրված մասնակից «Կարենօիլ» ՍՊԸ–ին ուղարկվել է պայմանագիր կնքելու ծանուցում, սակայն վերջինս մինչև օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտը չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի օրինակը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով՝ ՀՀ գնումների մասին օրենքի 36–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին ենթակետով հաստատված կարգի 49–րդ և 50–րդ կետերով.

Որոշվեց՝

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/102 ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչված «Կարենօիլ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

2. Տիրան Լաճիկյանին՝

1) «Կարենօիլ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին:
2) ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/102 ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնով ընտրված մասնակցի որոշման նպատակով՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 8
Դեմ՝ 0

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի վարչական շենքում:

Կողմ՝ 8
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Գևորգյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Չիդեմյան

Ա. Ղոսմալյան

Տ. Ղևոնդյան _____

Հ. Մելքոնյան _____

Գ. Եսայան _____

Լ. Օհանյան _____

Ա. Պետրոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____